ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ. Քաղաքակրթությունների աշխարհագրություն, *Երևան, «Տիգրան Մեծ», 2011, 476 էջ:*

Այլ գիտությունների հետ աշխարհագրական գիտության ունեցած ավանդական և ոչ ավանդական կապերն ու առնչությունները հնարավորություն են տալիս այդ լայն ընդգրկուն դաշտում ինքնատիպ և նորովի մոտեցում ցուցաբերել քաղաքակրթությունների աշխարհագրությանը: Հենց այս նկատառումների արդյունքում է ծնվել աշխարհագրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Յուրիկ Մուրադյանի «Քաղաքակրթությունների աշխարհագրություն» աշխատությունը, որը, ըստ հեղինակի, ԱՊՀ տարածաշրջանում առաջինն է: Այն մայրենի լեզվով մի ծավալուն ու յուրատեսակ աշխարհագրական ձեռնարկ է՝ քաղաքակրթությունների բարդ խաչմերուկում աշխարհագրության ավելի ակտիվ դերակատարման ընդգծմամբ: Ուշագրավն այն է, որ աշխարհագրական հետազոտություններում և մասնավորապես ուսումնական աշխարհագրության մեջ քաղաքակրթական մոտեցման առաջին քայլերը կատարվել են հենց Յու. Մուրադյանի կողմից:



Մանրազննին քննության ենթարկելով հայալեզու և օտարալեզու 200-ից ավելի աղբյուրներ՝ փաստագրական հարուստ, տարաբնույթ, բայց և խոսուն, ուշադրության արժանի տվյալներով հեղինակը կարողացել է ի մի բերել, խմբավորել, գնահատել, դիտարկել ու արժևորել քաղաքակրթությունը որպես ամենաբարձր աստիճանի մշակութային ընդհանրություն:

Աշխատանքն աչքի է ընկնում նաև նյութի յուրացման և լեզվագիտական բարձր մակարդակով, իր բովանդակությամբ արծարծված խնդիրներով,փաստերի լուրջ բացահայտմամբ և վերլուծական բացառիկ եղանակով: Բերված ուշագրավ փաստերն ավելի արժեքավոր և հետաքրքիր են դարձնում աշխատությունը:

Գիրքը հաջողված է և իր կուռ կառուցվածքով, գլուխների հստակ տարանջատմամբ, նյութի մատուցման խորությամբ, հիմնախնդիրների նկատմամբ աշխարհագրական բազմակողմանի մոտեցմամբ:

Աշխարհագրությունն ավելի է արժեվորվում հատկապես մեր օրերում, երբ մեծանում է աշխարհագրությանը ներկայացվող սոցիալական պատվերը, երբ միջազգային թատերաբեմում ընթացող գործընթացները մտնում են անկանխատեսելի փուլ՝ բացառելով քաղաքակրթությունների երկխոսությունը, մեծացնելով բախումների ռիսկը: Այստեղ է, որ մշակույթների և քաղաքակրթությունների փոխհարաբերությունը դառնում է առաջնային՝ վեր հանելով աշխարհի ժամանակակից քաղաքակրթական բաժանման աշխարհագրական ողջ պատկերը:

Գիրքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, և օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլխում («Քաղաքակրթությունը որպես նյութական և հոգևոր մշակույթի բարձր մակարդակ») անդրադառնալով «մշակույթ» և «քաղաքակրթություն» հասկացություններին՝ հեղինակը հանգամանորեն կանգ է առել քաղաքակրթությունների ծագման, զարգացման և կործանման պատճառներին ու նախադրյալներին, տվել դրանց տիպաբանությունը և դասակարգումը:

Հետաքրքիր է քաղաքակրթությունների խաչմերուկում դիտարկել թե՛ անհետացած և թե՛ժամանակակից քաղաքակրթությունների էությունը,կապերը, արմատները,գոյատևման ժամանակահատ-

վածը,զարգացման ընթացքը, ինչն էլ հաջողությամբ իրականացրել է հեղինակը: Արժեքավոր է հատկապես անհետացած քաղաքակրթություններին վերաբերող երկրորդ գլուխը, որտեղ Յու. Մուրադյանը բազմակողմանիորեն ներկայացնում է այնպիսի հին քաղաքակրթություններ, ինչպիսիք են՝ միջագետքյան, եգիպտական, Կրետեի հունահռոմեական, բյուզանդական, մեսոամերիկյան, Անդյան քաղաքակրթությունները և հելլենիստական մշակույթը:

Երրորդ գլխում նախ անդրադարձ կա աշխարհի ժամանակակից քաղաքակրթական բաժանման աշխարհագրական պատկերին, ապա բազմակողմանիորեն քննության են ենթարկվում գոյություն ունեցող ժամանակակից քաղաքակրթությունները՝ հնդկական, չինական, ճապոնական, իրենց յուրատեսակ առանձնահատկություններով ու առնչություններով:

Աշխատության հաջողված բաժիններից են մահմեդական և քրիստոնեական քաղաքակրթություններին վերաբերող նյութերը, որոնցում դիտարկվում են այս խոշոր մշակույթների յուրահատկությունները, շփման հնարավոր սահմանները, երկխոսության անհրաժեշտությունը, բախումների կանխարգելումը: Հեղինակի նորովի մոտեցումը քրիստոնեական քաղաքակրթությանը՝ իր ենթամշակույթներով՝ եվրոպական, հյուսիսամերիկյան, ավստրալանորզելանդական, լատինաամերիկյան և ուղղափառ, ևս գիտականորեն հաջողված է և ուշադրության արժանի:

Տարբեր քաղաքակրթությունների շրջանակներում անդրադարձներ կան զանազան մշակույթների ոլորտում և հայերի ունեցած ներդրումների մասին:

Գրքի դրական կողմերից մեկն էլ այն է, որ հեղինակը հմտորեն մտել է յուրաքանչյուր քաղաքակրթության էության մեջ՝ փորձելով վեր հանել դրանցից յուրաքանչյուրի ունեցած ավանդը մարդկային քաղաքակրթության ընդարձակ ու բազմաբովանդակ դաշտում:

Գրքում հստակորեն առանձնացվում և ընդգծվում են այն ժողովուրդները, որոնք քաղաքակրթություններ ստեղծողներ ու արարողներն են, մշակույթներ զարգացնող ու պահպանող: Սա կարևոր է այն տեսանկյունից, որ համաշխարհային պատմությանը հայտնի են նաև քաղաքակրթություններ ու մշակույթներ ոչնչացնող, ավերող, վերացնող և ուրացող էթնոսներ:

Ամփոփելով, կարող ենք արձանագրել. Յու. Մուրադյանի «Քաղաքակրթությունների աշխարհագրությունը» հրապարակ է իջել ճիշտ ժամանակին՝ դառնալով սեղանի գիրք, ուղեցույց՝ մշակույթների բարդ փոխհարաբերությունների արդի փուլում:

ԿԱՄՈ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ